«ԼԻՏԵՐԱՏՈՒՐՆԱՅԻՆ ԳԱԶԵՏԱ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ

Լիցել Հայ Եւ Մնալ Հայ

Անուն ազգանուն.- Ռուբինա Փիրումեան-Մինասեան

Ծննդեան տարեթիւն ու վայրը.- 1936, Դեկտեմբեր 11, Թաւրիզ, Իրան.

Բնակութեան մշտական վայրը.- Գլենդել, Քալիֆորնիա, ԱՄՆ.

Մասնագիտութիւնն ու աշխատանքային գործունէութիւնը.- Ճարտարագէտ, վկայեալ Թեհրանի Պետական Համալսարանից: Աշխատել եմ այդ ասպարէզում 1960-1980, որոշ դադարումներով: 1980-1989 ուսանել եմ Քալիֆորնիայի Համալսարանում, Լոս Անջելըս (UCLA), Միջին Արեւելեան

ՀԱՐՑ.- Ի՞նչ հանգամանքների բերումով էք դուք ծնուել ու մեծացել պատմական հայրենիքից դուրս:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Մնողներս եղել են բնիկ պարսկահայեր, բացի մօրս հայրը, որ 1906ին, որպէս Եփրեմ Խանի զինուոր, էրզրումից Պարսկաստան է եկել եւ յեղափոխութիւնից յետոյ բնակութիւն հաստատել եւ ընտանիք է կազմել Պարսկաստանում:

ՀԱՐՑ.- Ինչպէս է ձեր ծագումը յարաբերւում ձեր քաղաքացիութեան հետ: Ձեզ խանգարում, թէ հարստացնում է այդ պարտադրուած երկատուածութիւնը:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Կեանքիս կէսից աւելին եղել եմ իմ ծննդավայր՝ Իրանի քաղաքացի: Դրանով հանդերձ, որ այն տարիներին կանանց մուտքը ընտրածս մասնագիտութեան ոլորտում շատ հազուագիւտ էր, ո՛չ համալսարանում եւ ոչ էլ աշխատանքիս ասպարէզում խտրականութիւն չեմ զգացել: Բայց խորապէս գիտակցել եմ, որ իրանցի համարուելով հանդերձ, պատկանում եմ երկրի ազգային

փոքրամասնութիւններից մէկին (Իրանում ազգային փոքրամասնութիւն էին համարւում հայերը, հրէաները եւ ասորիները): Ընտանեկան դաստիարակութիւնս եւ տեղի մշակութային կազմակերպութիւններում ստացածս ազգային դաստիարակութիւնը իմ մէջ սերմանել է կարօտը ոչ հեռու, բայց անհասանելի հայրենիքի եւ ամրակայել մէջս՝ ազգային ինքնութիւն եւ պատկանելիութիւն, որ լիովին համապատասխանում էր ազգային փոքրամասնութեան անդամ լինելուս հանգամանքին: Այս բոլորը, ի հարկէ, Իսլամական յեղափոխութիւնից առաջ, քանի որ յեղափոխութեան ընթացքում եւ յետոյ մենք ընտանիքով՝ ես, ամուսինս եւ երկու զաւակներս, Ամերիկայի Միացեալ Նահանգներում էինք արդէն: Վերջին 30 տարին ԱՄՆի քաղաքացի եմ՝ լիովին ընտելացած լեզուին, մշակոյթին, ապրելակերպին եւ սովորոյթներին: Այստեղ ազգային փոքրամասնութեան անդամ չեմ, քանի որ բաժանումները ցեղային են եւ ես պատկանում եմ սպիտակամորթ (Caucasian) մեծամասնութեան: Այնուամենայնիւ, այստեղ աւելի խորն եմ զգում կապուածութիւնս հայրենիքիս, բայց ինձ աներկբայօրէն սփիւռքահայ եմ զգում: Զգում եմ ո՛չ թէ երկատուած, այլ ինքնութեանս մէջ գոյութիւն ունեն երեք ձգողական ուժեր՝ ծննդավայրս՝ Իրանը, հայրենիքս, որ Հայաստան աշխարհն է, որի ներշնչանքով ու կարօտով եմ դաստիարակուել, եւ վերջապէս՝ երկիրը, ուր մշտական բնակութիւն եմ հաստատել: Եւ այդ բեւեռները՝ երբեմն իրարամերժ, իրար հակասող, ինձանից կողմնորոշում պահանջող, երբեմն էլ իրար լրացնող եւ ինքնութիւնս հարստացնող: Ահա սփիւռքահայի իւրայատուկ իրավիճակ:

ՀԱՐՑ.- Ինչպիսի՞ զգացողութիւններ էք ունենում «օտարների մէջ իւրային, իւրայիններ մէջ օտար» արտայայտութիւնը լսելիս:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Արտայայտութիւնը լիովին համապատասխանում է իմ հոգեկան աշխարհին: Ի սկզբանէ ձեւաւորուած սփիւռքահայի իմ մտայնութեան մէջ բնական երեւոյթ է ոչ հայ հարեւանիս, գործակցիս, համաերկրացուս օտար տեսնելը: Ինքս ինձ աւելի հանգիստ եմ զգացել հայկական համայնքում ու հայ միջավայրում, եւ դա՝ թէ՛ Իրանում եւ թէ ԱՄՆում: Ցաւալին իրողութեան երկրորդ երե-

(Շար. 14րդ էջ)

USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES

DEAN STEVE KAY

AND THE

USC DANA AND DAVID DORNSIFE
COLLEGE OF LETTERS, ARTS AND SCIENCES

TOGETHER WITH THE

USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES
LEADERSHIP COUNCIL

ON ITS

TENTH ANNIVERSARY

INVITE YOU TO A GALA BANQUET HONORING

C. L. MAX NIKIAS

PRESIDENT, UNIVERSITY OF SOUTHERN CALIFORNIA

FOR CHAMPIONING THE

USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES

SUNDAY, THE TWENTY EIGHTH OF SEPTEMBER

TWO THOUSAND FOURTEEN

AT FIVE O'CLOCK

THE BEVERLY HILTON HOTEL

INTERNATIONAL BALLROOM

9876 WILSHIRE BOULEVARD

BEVERLY HILLS

COCKTAIL ATTIRE

YOUR RESPONSE IS REQUESTED BY THE FIFTH OF SEPTEMBER

For information, contact Elizabeth Agbabian (310) 476-5306; Diane Cabraloff (310) 729-1552; Lori Muncherian (310) 936-4758; Savey Tufenkian (818) 956-8455

Email: USC.RSVP@Yahoo.com

National Honorary Council

GOV. GEORGE DEUKMEJIAN
HON. EDWARD DJEREJIAN
HON. JOHN MARSHALL EVANS
DR. VARTAN GREGORIAN
HON. PAUL IGNATIUS
MR. GERALD TURPANJIAN

Leadership Council

DR. MIHRAN AGBABIAN
MR. JOHN BERBERIAN
DR. R. HRAIR DEKMEJIAN
MR. CHARLES GHAILIAN, CHAIR
MR. VAHE KARAPETIAN
MR. FRANK VARRANT MELKONIAN
DR. DONALD EARL MILLER
MRS. LORI MUNCHERIAN
MR. GERALD PAPAZIAN
MR. SINAN SINANIAN
HON. DICKRAN TEVRIZIAN
MRS. SAVEY TUFENKIAN

Gala Banquet Committee

Co-Chairs
DIANE CABRALOFF AND LORI MUNCHERIAN

ELIZABETH AGBABIAN
MARILYN BEZDIKIAN
ALICE CHAKRIAN
FLORA DUNALIANS
HERMINE JANOYAN
SANDRA KALEMKIARIAN
EILEEN KEUSSEYAN
ARSINE PHILLIPS
SAVEY TUFENKIAN

Լինել Հայ եւ Մնալ Հայ

(Շար. 10րդ էջէն)

սակն է: Այո, ինձ օտար եմ զգացել հայրենիքում, երբ չփումներս՝ տարբեր մակարդակի, տարբեր շրջանակի անձանց հետ ինձ պարտադրել են տեսնելու մտայնութեան, աշխարհայեացքի, համամարդկային ու ազգային արժէքների ընկալման տարբերութիւնը, հսկայ տարբերութիւն: Գերզգայո՞ւն եմ, անիրական ակնկալիքնե՞ր ունեմ, ըղձանքներս ու երազանքներս ինձ կտրե՞լ են իրականութիւնից: Զգիտեմ: Գիտեմ միայն, որ մենակ չեմ հոգեկան տագնապիս մէջ: Պարսկահայ-ամերիկահայ ճանաչուած գրող Յակոբ Կարապենցին օտար եկաւ Հայաստանի ժողովուրդը: Եւ նա ցաւով խոստովանեց, թէ ինքն իրեն զգացել էր «օտար եւ այցելու, երբ նրանք իմ եղբայրներն էին... Ես կորցրել էի դաշնը արեան ու հողի հետ եւ... փորձում էի վերագտնել ռիթմը, որը մաչուել էր օտար պողոտաներում»: Ամերիկահայ յայտնի բանաստեղծուհի Դայանա Տէր Յովհաննիսեանը նոյն զգացումն է ունեցել,

I am the stranger
in my father's land,
the traveler to the country
I can neither leave
nor stay,
a foreigner in the place,
where millennium ago
my kind was bred.

Հայաստան-Սփիւռք յաճախակի չփումները կարող են փոխել այս տարօրինակ զգացումը ու Հայը ազգ դարձնելու միջին ճամբայ գծել: